

էին Հերման Վահրամյանի՝ միջնադարյան վաճառական հաստատութիւնների և դ-ր Տ. Ակալեսսեի՝ Խորակերտի մասին զեկուցումները:

Գիտաժողովում կարդացված զեկուցումների մի մասը նվիրված էր ճարտարապետության և արվեստի բնագավառում եղած առնչությունների և կապերի վերլուծությանը, ընդ որում հիմնականում շոշափվում էին Հայաստանի և Արեւմտքի երկրների մշակութային առնչությունները բրոնզի դարից մինչև միջնադար: Դրանցից էին Կ. Գոնեթոնի (Փարիզ) զեկուցումը («Բրոնզեդարյան Հայաստանը և Կովկասը»), պրոֆ. Մ. Շահինի (Լոնդոն) զեկուցումը «Բարսեղական բրոնզի մասին և այլն: Մի շարք զեկուցումներ նվիրված էին հայ-բալկանյան, հայ-բուլղարական և հայ-հարավսլավական արվեստների առնչություններին: Այսպես, պրոֆ. Զ. Իոնեսկուի (Բուխարեստ) ելույթը վերաբերում էր հայ-ռումիական մշակութային կապերին, պրոֆ. Պ. Միրովիչին (Բելգրադ)՝ հայ և սերբ ժողովուրդների, իսկ պրոֆ. Ա. Բոյաչիևին (Սոֆիա)՝ հայ-բուլղարական ճարտարապետական առնչություններին:

Զեկուցումների մի մասը նվիրված էր հայ-խալիպական մշակութային առնչությունների պրոբլեմին: Այդպիսիք էին պրոֆ. Ֆ. Բիանկիի («Հայերի առկայությունը Լոմբարդիայում»), պրոֆ. Զ. Սոկիի («Հայ-լոմբարդական ճարտարապետական առնչություններ»), զոկտոր Լեոն Զեքեյանի («Խալիպայում հայկական դադիթախների և հայ-խալիպական մշակութային առնչությունների մասին») զեկուցումները: Ուշագրավ էր պրոֆ. Դ. Դի-Բերնարդի-Ֆերրերոյի զեկուցումը խաչվող կամարների և հատկապես Կազայե Մոնֆերատի Ա. էվանգիո եկեղեցու գավթի խաչվող կամարների մասին: Հեղինակի կարծիքով վեր-

ջիններս անմիջական կապ ունեն հայկական միջնադարյան խաչվող կամարների հետ:

Առանձին խումբ էին կազմում Հարավային Խալիպյի հայկական բնակավայրերում պահպանված հուշարձաններին նվիրված զեկուցումները: Դրանցից էին պրոֆ. Վ. Զիլի («Հայկական Ս. Գրիգոր եկեղեցին Նեապոլում») և պրոֆ. Ս. Մարիանի-Կարլոյի («Պուլի շրջանը և կովկասյան մշակույթը») զեկուցումները: Այս շարքին էին պատկանում նաև մի շարք այլ հաղորդումներ:

Զգալի թիվ էին կազմում ընդհանրապես արվեստին և մասնավորապես կիրառական արվեստին նվիրված զեկուցումները: Ուշագրավ էր Գեվիդ Լանգի (Լոնդոն) զեկուցումը Հայաստանի և Վրաստանի միջնադարյան դրամների մասին: Արվեստագիտական զեկուցումների գերակշռող մասը վերաբերում էր հայ-եվրոպական առնչություններին, ընդ որում առավել լայն ձևով քննարկվում էին հայ-բալկանյան կապերը (Զ. Իոնեսկու (Բուխարեստ), «Հայ-ռումիական առնչությունները արվեստի բնագավառում», պրոֆ. Ժ. Բլանկոֆֆ (Բրյուսել), «Հայ և վրաց արվեստի առնչությունները Վլադիմիր-Սուդոպոլի հուշարձանների հետ», Ն. Տիեր՝ «Պաղեստինյան պատկերագրության վերապրուկները Վասպուրականում», Զ. Կուլումջյան (Բել-բուլ), «Կենդանակերպերի մասին հայ մանրանկարչության մեջ»):

Գիտաժողովում կարդացված զեկուցումները լավում էին մեծ ուշադրությամբ: Դրանք հրատարակվելու են առանձին հատորով:

Ճարտարապետության դոկտոր
Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

ԼՈՒԳՄԻԱ ՄՈՏԱԼՈՎԱ

Ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում վախճանվեց հայ գրականության ու մշակույթի անկեղծ բարեկամ, չեխ հայագետ, թարգմանիչ Լուդմիլա Մոտալովան:

Լուդմիլա Մոտալովան այլազգի այն հայագետներից էր, որ ամբողջովին նվիրվել էր հայ ժողովրդի պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրմանն ու պրոպագանդմանը: Գրականագիտական, լեզվաբանական ու արվեստաբանական իր խոր գիտելիքները նա ծառայեցնում էր հայոց լեզվի, հայ հին ու ժամանակակից գրականության գիտական խնդիրների լուծման գործին, իր լավագույն թարգմանություններով օժանդակում հայ և չեխ ժողովուրդ-

ների ավելի խոր փոխըմբռնմանն ու բարեկամության ամրապնդմանը:


Լուդմիլա Մոտալովան ծնվել է 1935 թ., բժշկի բնտանիքում: Մոտալովների հարուստ գրադարանը մանկական տարիներից նրան կապել է գրքերի աշխարհին: Հայ ժողովրդի նկատմամբ հետաքրքրությունը նրա մեջ առաջացել է աշակերտական տարիներին, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպից և խորացել Պրահայի Կարելի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում ուսանելիս: Հենց այդ համալսարանի արևելագիտության բաժնում էլ, Ցարոմիր Եղլիչկայի մոտ նա սովորել է հայերեն: Ռացի հայերենից, Մոտալովան տիրապե-

տում էր նաև ուսանողներին, լեհերին, անգլերենին, ֆրանսերենին, լատիներենին, հին հունարենին և հին սլավոներենին. մի հանգամանք, որ նրան թույլ էր տալիս համեմատական մեթոդներով ուսումնասիրություններ կատարելու:

Հայ գրականությունից թարգմանելու առաջին փորձերը Մոտալովան կատարել է համալսարանում ուսանելու տարիներին, իսկ նրա դիպլոմային աշխատանքը եղել է Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» պատմվածքի թարգմանությունը: Սկսած 1955 թ., թարգմանչական գործունեության բնական տարվա ընթացքում Մոտալովան հայ գրականությունից թարգմանելու հրատարակել է մեկ տասնյակից ավելի գիրք, այդ թվում՝ Ավետիք Իսահակյանի պատմվածքները (1958 թ.), «Արու-Հալա մահարի» պոեմը (1966 թ.), Վլադիմիր Հոլանի հետ), Հովհաննես Բուստանյանի «Ախթամար» պոեմը (1969 թ.), Եղիշե Չարենցի բանաստեղծությունների ու պոեմների ժողովածուն (1962 թ., Օ. Վիհլ-դալի ու Մ. Բուրշևիչի հետ), հայկական ժողովրդական հեքիաթների երկու ստվար հատորները (1972 թ.), Պարույր Սևակի բանաստեղծությունների «Հիմն լույսի» ժողովածուն (1971 թ.), Մկրտիչ Արմենի «Հեղինար աղբյուր» վիպակը, որ երկու հրատարակություն է ունեցել (1968 և 1973 թթ.), Հրանտ Մաթևոսյանի, Ջորայր Խալափյանի, Գևորգ Արշակյանի վիպակները և այլն: Արդեն թարգմանելու հրատարակության էր հանձնել սովետահայ բանաստեղծների անթողգիան, Ավետիք Իսահակյանի պատմվածքների նոր ժողովածուն՝ «Բաղում ճանապարհներ» խորագրով, որ լույս է տեսնելու հայ մեծանուն բանաստեղծի ծննդյան 100-ամյակի օրերին: Սրանի միայն առանձին գրքերով հրատարակվածներն են: Քիչ չեն նաև այն գործերը, որ Մոտալովան թարգմանել է և հրատարակել ամսագրերում ու թերթերում, հաղորդել Չեխովի վեպերի ու պիեսների (Ալեքսեյ Բակունցի «Ալպիական մանուշակ», «Միհրհալ», «Տիգրանուհի» պատմվածքները, Պարույր Սևակի «Անլուրի զանգակատուն» պոեմից հատվածներ, «Ֆրանչեսկա դա Ռիմինի» պոեմը և այլն):

Սակայն կուղմիա Մոտալովայի գործունեությունը թարգմանություններով չի սահմանափակվել: Նրա հետաքրքրությունները հայ ժողովրդի պատմության ու մշակույթի նկատմամբ բաղմակողմանի էին, և նրա գրիչը բեղմնավոր է եղել նաև հայագիտության բնագավառում: 1959 թ. սկսած, աշխատելով Չեխովի վեպերի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում, Մոտալովան գիտական տարրեր հրատարակությունների ու ժողովածուների համար գրել է բաղմաթիվ ուսումնասիրություններ, հոդվածներ ու հաղորդումներ հայկա-

կան մշակույթի զանազան հարցերի շուրջը: Հայ գրողներին նվիրված քառասունյոթ հոդված է նա գրել Ասիայի ու Աֆրիկայի գրողների երկհատորանոց բառարանի (1967 թ.) համար, հիսուներից ավելի հոդված «Արևելյան գրականությունների բառարանի» համար, որ լույս է



տեսել 1974 թ. լոնդոնում, անգլերեն: Մոտալովայի գրչին են պատկանում Սովետական Միության ժողովուրդների գրողների բառարանի (1966 թ.) վաթսուներից ավելի հոդվածները հետհեղափոխական շրջանի հայ գրողների մասին: Մոտալովան մասնակցել է «Ասիական ժողովուրդների նոր գրականությունների ստեղծման ու զարգացման հետազոտություններ» (1970 թ.) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվերով Չեխովի վեպերի գիտությունների ակադեմիայի 1971 թ. անգլերեն հրատարակած «Բանագիտական ձեռնարկ Ասիայի ու Աֆրիկայի նյութի վրա» կոլեկտիվ աշխատանքներին, որոնց մեջ լայնորեն ներկայացված են հայ գրականությունն ու մշակույթը: 1969 և 1970 թթ. Պրագայում կայացած արևելագիտական կոնֆերանսում Մոտալովան հանդես է եկել «Արևմտյան ու Արևելյան տարրերի համադրումը հայ մշակույթի. հատկապես գրականության մեջ» և Հայերի մշակութային գործունեությունը Մերձավոր Արևելքում» զեկուցումներով, որոնք տպագրվել են չեխերեն ու անգլերեն: Երկար տարիների աշխատանքի արդյունք է Ավետիք Իսահակյանի «Արու-Հալա մահարի» պոեմի տեքստի վերլուծությանը նվիրված նրա ծավալուն ուսումնասիրությունը, որից միայն երկու հատված է տպագրվել Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» և «Բրյուսովյան ընթերցումներ» ժողովածուում: Այս ամենին

եթե ավելացնենք նաև «Սովետական Հայաստան» պրիուկը (1966 թ.), ինչպես նաև 1915 թ. հայկական եղեռնին, հայ արվեստի ու մշակույթի գործիչներին, գրական ավանդներին նվիրված և տարբեր բնույթի այլ հոդվածներ, որ տպագրվել են Զեխոսլովակիայի պարբերական մամուլում, հաղորդվել ռադիոյով, ապա պարզ կլինի, թե որքան լայն է եղել Մոտալովայի գործունեության շրջանակը և ինչպիսի նվիրումով է նա կատարել այդ ածենը:

Այս տարեսկզբին մեկ ամիս լինելով Հայաստանում, Մոտալովան բազմաթիվ նյութեր էր հավաքել իր հետագա հետազոտությունների համար: Զեխոսլովակիայում լույս տեսնող «Սովետական Միության գրողների բառարանի» համար պիտի գրեր ավելի քան ութսուն հայ հե-

ղինակներին վերաբերող հոդվածները: Շուտով ավարտելու էր «Մեր ձավոր Արևելքի հայկական մշակույթն ու քաղաքական կյանքը վերջին տարիներին» ուսումնասիրությունը, որ Զեխոսլովակիայի ԳԱ արևելագիտության ինստիտուտի պլանային աշխատանքներից էր: Համապատասխան նյութեր էր հավաքել Հայաստանի վերաբերյալ Զեխոսլովակյան հանրագիտարանի համար: Ուրիշ շատ մտահղացումներ էլ ուներ լույս տեսնող Մոտալովան, որոնք, դժբախտաբար, չհասցրեց իրագործել: Սակայն այն, ինչ նա արել է իր գիտական-ստեղծագործական կարճատև կյանքի ընթացքում, բավական է, որ նրանունը մշտապես հիշվի հայագիտության երախտավորների շարքում:

Ա. ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ